600.0150.29.04.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2020 թվականի №150Ա

ք. Երևան

«ՔԱՐԵ ՀՈՎԻՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՇԵՆԻԿ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ №0513 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի հոկտեմբերի 2-ի №337Ա որոշմամբ «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Արմավիրի մարզի Շենիկ համայնքի վարչական տարածքում՝ Թալինի ջրանցքի երկրորդ հերթի ջրատարի վրա, «Շենիկ» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0513 լիցենզիան (այսուհետ՝ №0513 լիցենզիա),

բ) Հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 12-ի №25Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) ութ ամսով երկարաձգվել է №0513 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը, ինչից ելնելով՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով Ընկերությունը պարտավորեցվել է Որոշումն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 1,487,500 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2020 թվականի նոյեմբերի 28-ը գործողության ժամկետով, ինչը, սակայն, Ընկերության կողմից չի կատարվել,

գ) Հանձնաժողովը 2020 թվականի մարտի 31-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է նույն օրվա №ՍՇ/34.1-Ղ4-2/1150-20 գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի ապրիլի 10-ի գրությամբ հայտնել է, որ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության 2019 թվականի հունիսի 20-ի №1098 գրությամբ թողարկված երաշխիքի գործողության ժամկետը մինչև 2020 թվականի մայիսի 29-ն է: Նշված ժամկետից շուտ հիշյալ երաշխիքի դադարեցման վերաբերյալ Հանձնաժողովը համապատասխան գրությամբ չի տեղեկացրել բանկին, հետևաբար վերը նշված երաշխիքն ուժի մեջ է մինչև 2020 թվականի մայիսի 29-ը: Ընկերությունը հայտնել է նաև, որ երկրում ստեղծված արտակարգ իրավիճակով պայմանավորված նոր երաշխիքի ներկայացմանն ուղղված գործողություններ իրականացնել չի կարող, միաժամանակ, հայտնելով Կայանի կառուցման աշխատանքներին խոչընդոտող որոշ հանգամանքների մասին, խնդրել է №0513 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման համար տրամադրված ժամկետը կասեցնել մինչև 2020 թվականի նոյեմբերի 15-ը՝ այդ օրը սահմանելով նաև որպես 1 487 500 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարի «երաշխիքային նամակը» ներկայացնելու ժամկետի սկիզբ,

ե) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 8-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին, Հանձնաժողովի որոշմամբ կամ գրությամբ սահմանված ժամկետում, լիցենզավորված անձը Հանձնաժողով է ներկայացնում նույն կարգին համապատասխան հաշվարկված երաշխիք,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը, այդ կերպ խոչընդոտելով կարգավորող մարմնի կարգավորման գործառույթների պատշաճ իրականացումը, մասնավորապես, զրկելով վերջինիս №0513 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածում Կայանի չկառուցման պարագայում համապատասխան գումարի՝ պետական բյուջե փոխանցման իր իրավասության իրացման հնարավորությունից: Ինչ վերաբերում է Ընկերության փաստարկներին, ապա դրանք որևէ կերպ չեն կարող դիտվել որպես Որոշման պահանջը չկատարելու օբյեկտիվ պատճառ: Մասնավորապես՝

- նախկինում Հանձնաժողով ներկայացված երաշխիքի գործողության ժամկետը սույն թվականի մայիսի 29-ին լրանալու վերաբերյալ փաստարկը որևէ առնչություն չունի վարույթի առարկայի հետ, քանի որ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով Ընկերությունը պարտավորեցվել է ներկայացնել մինչև 2020 թվականի նոյեմբերի 28-ը գործողության ժամկետով 1,487,500 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք, որպիսին Ընկերության մատնանշած՝ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության 2019 թվականի հունիսի 20-ի №1098 գրությամբ թողարկված երաշխիքը չի հանդիսանում,
- Ընկերության կողմից չի հիմնավորվել Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջի չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը: Մասնավորապես, որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, անհրաժեշտ է, որ այն հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար, մինչդեռ Ընկերությունը նշված հանգամանքների առկայությունը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացրել, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ավելին, համապատասխան պարտավորության կատարման մասին Ընկերությունը տեղյակ է եղել դեռևս սույն թվականի փետրվարի 12-ից (Որոշման կայացման պահից), արտակարգ դրություն երկրում հայտարարվել է սույն թվականի մարտի 16-ից, իսկ անձանց ազատ տեղաշարժի սահմանափակումները կիրառվել են ավելի ուշ՝ Հայաստանի Հանրապետության պարետի 2020 թվականի մարտի 31-ի №27 որոշմամբ: Ընդ որում, անգամ հիշյալ սահմանափակումների պարագայում երկրում բանկային համակարգը գործել է անխափան, և էներգետիկայի բնագավառի շատ լիցենզավորված անձանց կողմից քննարկվող

ժամանակահատվածում պատշաճ կարգով կատարվել է բանկային երաշխիքի՝ Հանձնաժողով ներկայացման պարտավորությունը,

- Կայանի կառուցման բարդություններով պայմանավորված №0513 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման համար տրամադրված ժամկետը մինչև 2020 թվականի նոյեմբերի 15-ը կասեցման և նույն օրը 1 487 500 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարի «երաշխիքային նամակը» ներկայացնելու ժամկետի սկիզբ սահմանման մասին խոսք լինել չի կարող՝ նման օրենսդրական հնարավորության բացակայության պատճառով, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի խախտման համար կասեցնել №0513 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից 15 օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
29 ապրիլի 2020թ.